ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-14-1-11/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 10-ին կնքված ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-14-1-11/4 գնման պայմանագրում 2015թ-ի հունվարի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ եղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 26.01.2015թ. կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ ծառայության մատուցման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 25.12.2015թ.

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-1
10.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-14-1-11/4 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «26» հունվարի **2015թ.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Փի-Արտ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Կ.Քոչարյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 10.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-14-1-11/4 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1.Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1,2. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը սահմանել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.3. Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.4. 10.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-14-1-11/4 գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2015 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Փի-Արտ» ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Ադամյան-1	ք. Երևան, Ս. Վրացյան 71, բն. 7
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 00080887
Հ/Հ 9000110000925	Հ/Հ 2380017731060100
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար	«Փի-Արտ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Կ.Քոչարյան**

Հավելված
Հաստատված է
«10» դեկտեմբերի 2014թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-14-1-11/4
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
''Շահող կտրոն'' վիճակահանության գովազդային ծառայություններ	4234	11 265 000	22 530 000	33 795 000	45 060 000	56 325 000	67 590 000	78 855 000	90 120 000	101 385 000	112 650 000	135 180 000	**135 180 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
Ք.Երևան, Մ.Ադամյան-1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 9000110000925
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար
Ա.Արզումանյան

ԿԱՏԱՐՈՂ
«Փի-Արտ» ՍՊԸ
ք. Երևան, Ս. Վրացյան 71, բն. 7
ՀՎՀՀ 00080887
Հ/Հ 2380017731060100
«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ

«Փի-Արտ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Կ.Քոչարյան